

## ՀՀ ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ (ՀՀ ՎՊԽ) ՆԻՍՏԵՐ

01.11.2013թ. նիստին

### **Մասնակցում էին՝**

ՀՀ ՎՊԽ նախագահ Ս.Մնացականյանը, ՀՀ ՎՊԽ անդամներ՝ Գ. Անանյանը, Գ.Գևորգյանը, Յու.Պողոսյանը, Ս.Դավթյանը, Լ.Պետրոսյանը, ՀՀ ՎՊԽ քարտուղար Հ.Գրիգորյանը:

### **Հրավիրված էին՝**

ՀՀ ԱՎԾ նախագահի տեղակալ Լ. Միրզոյանը,

ՀՀ ԱՎԾ աշխատակազմի ղեկավար Ա. Հայրապետյանը,

ՀՀ ԱՎԾ աշխատակազմի ներքին աուդիտի վարչության պետ Ա.Մանանդյանը,

ՀՀ ԱՎԾ աշխատակազմի իրավաբանական բաժնի պետ Վ.Սարոյանը,

ՀՀ ԱՎԾ աշխատակազմի աշխատանքի վիճակագրության բաժնի պետ Լ.

Քալանթարյանը,

ՀՀ ԱՎԾ աշխատակազմի միջազգային վիճակագրական համագործակցության բաժնի գլխավոր մասնագետ Հ.Եղիազարյանը,

ՀՀ ԱՎԾ աշխատակազմի տնային տնտեսությունների հետազոտությունների բաժնի պետ Դ.Մարտիրոսովան,

ՀՀ ԱՎԾ աշխատակազմի մարդահամարի և ժողովրդագրության բաժնի գլխավոր մասնագետ Ա.Թոխաթյանը:

### **Նիստում լսվեցին հետևյալ հարցերը.**

**1.«2014 թվականի հունվարի 1-ից դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում իրականացվելիք տնային տնտեսությունների կենսապայմանների ամբողջացված հետազոտության հարցաթերթը և օրագիրը հաստատելու մասին»** հարցը:

*/Զեկուցող՝ Դ. Մարտիրոսովա/*

### **Որոշվեց՝**

Հաստատել 2014 թվականի հունվարի 1-ից դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում իրականացվելիք տնային տնտեսությունների կենսապայմանների ամբողջացված հետազոտության հարցաթերթը և օրագիրը՝ համաձայն հավելվածի:

*/Անհատական/*

**2. «ՀՀ ԱՎԾ աշխատակազմի ոչ պիտանի գույքի տնօրինման մասին» հարցը:**

*/Զեկուցող՝ Ա.Հայրապետյան/*

**Որոշվեց՝**

Թույլատրել օգտագործման համար ոչ պիտանի հիմնական միջոցների ցանկից գնահատված արժեք ունեցող ապրանքների համար սկսել գույքի օտարման գործընթաց ըստ հավելված 1-ի և ՀՀ ԱՎԾ աշխատակազմի պահեստում առկա օգտագործման համար ոչ պիտանի զրո դրամ գնահատված հիմնական միջոցները, փոքրարժեք և արագամաշ առարկաներն ամբողջությամբ հանձնել աղբավայր ըստ հավելված 2-ի և 3-ի:

*/Անհատական/*

**3.«Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության կողմից 2012 թվականին իրականացված տնային տնտեսությունների կենսամակարդակի ամբողջացված հետազոտության արդյունքում ձևավորված անվանազերծված տվյալների բազայի «ԲԱԺԻՆ Դ. Զբաղվածություն» հատվածը Ֆլորենցիայի Եվրոպական Համալսարան ինստիտուտին տրամադրելու թույլտվության մասին» հարցը:**

*/Զեկուցող՝ Լ.Քալանթարյան/*

**Որոշվեց՝**

Թույլատրել ՀՀ ԱՎԾ աշխատակազմի աշխատանքի վիճակագրության բաժնին՝ Ֆլորենցիայի Եվրոպական Համալսարան ինստիտուտին տրամադրել ՀՀ ԱՎԾ կողմից 2012 թվականին իրականացված տնային տնտեսությունների կենսամակարդակի ամբողջացված հետազոտության արդյունքում ձևավորված անվանազերծված տվյալների բազայի «ԲԱԺԻՆ Դ. Զբաղվածություն» հատվածը՝ զուտ գիտահետազոտական աշխատանքների իրականացման համար օգտագործելու, այլ անձանց չփոխանցելու, չվաճառելու, չիրապարակելու և այլ կարգով չտարածելու պայմաններով:

*/Անհատական/*

**4. Հաղորդում արտասահմանյան գործուղումների հաշվետվությունների մասին.**

**4.1. Հաղորդում՝ Վրաստանի Թբիլիսի քաղաքում 2013 թվականի հոկտեմբերի 16-ից 18-ը ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի կողմից կազմակերպված «Մանկական մահացության հարցերով» խորհրդաժողովին մասնակցելու վերաբերյալ:**

*/Զեկուցող՝ Ա.Թոխաթյան/*

4.2. Հաղորդում՝ Բրազիլիայի Ռիո դե Ժանեյրո քաղաքում 2013 թվականի հոկտեմբերի 22-ին ՄԱԿ-ի պարենի և գյուղատնտեսության կազմակերպության (ՊԳԿ) վիճակագրական բաժնի ու Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի տարածքային գրասենյակի կողմից կազմակերպված «Պարենային ապահովվածության վերլուծությունը տնային տնտեսությունների հետազոտության միջոցով հավաքագրված պարենի սպառման մասին տվյալների հիման վրա» խորագրով տարածքային սեմինարին և ՄԱԿ-ի պարենի և գյուղատնտեսության կազմակերպության վիճակագրական բաժնի կողմից կազմակերպված Տնային տնտեսությունների հետազոտության տվյալների հիման վրա պարենային ապահովվածության ADePT-FSM մոդուլի միջոցով պարենային ապահովվածության ցուցանիշների ստացման փորձի ներկայացումը և քննարկումը նախագիտաժողովային հատուկ միջոցառմանը մասնակցելու վերաբերյալ:

*/Զեկուցող Դ.Մարտիրոսովա/*

**Որոշվեց՝**

Արտասահմանյան գործուղումների հաշվետվությունների մասին հաղորդումներն ընդունել ի գիտություն:

*/Անհատական/:*

**13.11.2013թ. նիստին**

**Մասնակցում էին՝**

ՀՀ ՎՊԽ նախագահ Ս.Մնացականյանը, ՀՀ ՎՊԽ անդամներ՝ Գ. Անանյանը, Յու.Պողոսյանը, Ս.Դավթյանը, Լ.Պետրոսյանը, ՀՀ ՎՊԽ քարտուղար Հ.Գրիգորյանը:

**Հրավիրված էին՝**

ՀՀ ԱՎԾ նախագահի տեղակալ Լ. Միրզոյանը,

ՀՀ ԱՎԾ աշխատակազմի ներքին աուդիտի վարչության պետ Ա.Մանանդյանը,

ՀՀ ԱՎԾ աշխատակազմի իրավաբանական բաժնի պետ Վ.Սարոյանը,

ՀՀ ԱՎԾ աշխատակազմի աշխատանքի վիճակագրության բաժնի գլխավոր մասնագետ Ս. Հունանյանը,

ՀՀ ԱՎԾ աշխատակազմի միջազգային վիճակագրական համագործակցության բաժնի պետ Ա.Սաֆյանը,

ՀՀ ԱՎԾ աշխատակազմի միջազգային վիճակագրական համագործակցության բաժնի առաջատար մասնագետ Ռ. Շաբոյանը,

ՀՀ ԱՎԾ աշխատակազմի տեղեկատվական ռեսուրսների կառավարման և տեխնոլոգիաների վարչության տվյալների բանկերի մշակման և ծրագրավորման բաժնի պետ Ռ. Պետրոսյանը:

**Նիստում լավեցին հետևյալ հարցերը.**

**1. «Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի 2005 թվականի դեկտեմբերի 28-ի թիվ 38 և 42-Ն և ՀՀ ՎՊԽ 2009թ. դեկտեմբերի 14-ի թիվ 40 և 41-Ն որոշումներում փոփոխություններ կատարելու մասին» հարցը:**

*/Զեկուցող՝ Ս. Հունանյան/*

**Որոշվեց՝**

Հաստատել «Աշխատողների թվաքանակի և աշխատավարձի մասին» Ձև թիվ 1-Ա (ամսական), «Աշխատողների թվաքանակի և աշխատավարձի մասին» Ձև թիվ 1-Ա (տարեկան) պետական վիճակագրական հաշվետվությունների ձևերը, հարցաթերթը և լրացման հրահանգները համաձայն հավելվածների, ինչպես նաև ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի 2005 թվականի դեկտեմբերի 28-ի թիվ 38 և 42-Ն և ՀՀ ՎՊԽ 2009 թվականի դեկտեմբերի 14-ի թիվ 40 և 41-Ն որոշումները:

*/Նորմատիվ/*

**2. Հաղորդում արտասահմանյան գործուղումների հաշվետվությունների մասին.**

**2.1. Հաղորդում՝ Հունգարիայի Բուդապեշտ քաղաքում 2013 թվականի հոկտեմբերի 9-ից 11-ը Եվրամիության վիճակագրական ծառայության (Եվրոստատ) կողմից կազմակերպված «Վիճակագրական մեթատվյալներ» խորագրով ներածական դասընթացին մասնակցելու վերաբերյալ:**

*/Զեկուցողներ՝ Ռ.Շաբոյան, Ռ.Պետրոսյան/*

**2.2. Հաղորդում՝ Շվեյցարիայի Ժնև քաղաքում 2013 թվականի նոյեմբերի 4-ից 9-ը ՄԱԿ-ի Եվրոպայի տնտեսական հանձնաժողովի /ԵՏՀ/ Շրջակա միջավայրի քաղաքականության կոմիտեի և Վիճակագրության Եվրոպական կոնֆերենցիայի կողմից 2013թ-ի նոյեմբերի 4-8-ը Ժնևում կայացած Թափոնների վիճակագրության սեմինարին, Վիճակագիրների և բնապահպանների միասնական նպատակային խմբի 7-րդ և Բնապահպանական մոնիտորինգի ու գնահատման աշխատանքային խմբի 14-րդ նստաշրջանների աշխատանքներին մասնակցելու վերաբերյալ:**

*/Զեկուցող՝ Յու.Պողոսյան/*

**Որոշվեց՝**

Արտասահմանյան գործուղումների հաշվետվությունների մասին հաղորդումներն ընդունել ի գիտություն:

*/Անհատական/*

**20.11.2013թ. նիստին**

***Մասնակցում էին՝***

ՀՀ ՎՊԻ նախագահ Ս.Մնացականյանը, ՀՀ ՎՊԻ անդամներ՝ Գ. Անանյանը, Գ.Գևորգյանը, Յու.Պողոսյանը, Ա.Սաֆյանը, ՀՀ ՎՊԻ քարտուղար Հ.Գրիգորյանը:

***Հրավիրված էին՝***

ՀՀ ԱՎԾ նախագահի տեղակալ Լ. Միրզոյանը,  
ՀՀ ԱՎԾ աշխատակազմի ղեկավար Ա.Հայրապետյանը, Լ.Պետրոսյանը, Ս.Դավթյանը,  
ՀՀ ԱՎԾ աշխատակազմի ներքին աուդիտի վարչության պետ Ա.Մանանդյանը,  
ՀՀ ԱՎԾ աշխատակազմի իրավաբանական բաժնի պետ Վ.Սարոյանը,  
ՀՀ ԱՎԾ աշխատակազմի միջազգային վիճակագրական համագործակցության բաժնի պետ Հ.Եղիազարյանը,  
ՀՀ ԱՎԾ աշխատակազմի վիճակագրական տեղեկատվության տարածման և հասարակայնության հետ կապերի բաժնի պետ Ն. Մուշեղյանը,  
ՀՀ ԱՎԾ աշխատակազմի տնային տնտեսությունների հետազոտությունների բաժնի պետ Դ.Մարտիրոսովան,  
ՀՀ ԱՎԾ աշխատակազմի արդյունաբերության վիճակագրության բաժնի պետ Ա. Անանյանը և բաժնի գլխավոր մասնագետ Հ. Հակոբյանը,  
ՀՀ ԱՎԾ աշխատակազմի աշխատանքի վիճակագրության բաժնի առաջատար մասնագետ Զ. Ավոյանը,  
ՀՀ ԱՎԾ աշխատակազմի սոցիալական ոլորտի և բնապահպանության վիճակագրության բաժնի պետ Ն. Բաղդասարյանը,  
ՀՀ ԱՎԾ աշխատակազմի մակրոտնտեսական ցուցանիշների և ազգային հաշիվների բաժնի պետ Լ. Խաչատրյանը,  
ՀՀ ԱՎԾ աշխատակազմի վճարային հաշվեկշռի և արտաքին առևտրի վիճակագրության բաժնի պետ Ք. Պողոսյանը,  
ՀՀ ԱՎԾ աշխատակազմի աշխատանքի վիճակագրության բաժնի պետ Լ. Քալանթարյանը, Վ.Գևորգյանը, Է.Սանամյանը:  
ՀՀ ԱՎԾ աշխատակազմի տեղեկատվական ռեսուրսների կառավարման և տեխնոլոգիաների վարչության տվյալների բանկերի մշակման և ծրագրավորման բաժնի պետ Ռ. Պետրոսյանը:

***Նիստում լսվեցին հետևյալ հարցերը.***

**1.«2014 թվականի պետական վիճակագրական աշխատանքների ծրագիրը հաստատելու մասին»** հարցը:

***Որոշվեց՝***

Հաստատել «2014 թվականի պետական վիճակագրական աշխատանքների ծրագիրը» համաձայն հավելվածի:

*/Նորմատիվ/*

**2. «ՀՀ ՎՊԽ 2002 թվականի հուլիսի 26-ի թիվ 110-Ն, 2002 թվականի սեպտեմբերի 27-ի թիվ 232-Ն, 233-Ն, 234-Ն, 235-Ն, 236-Ն, 237-Ն 238-Ն, 239-Ն, 240-Ն, 241-Ն, 242-Ն որոշումներում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին»** հարցը:

*/Զեկուցող՝ Ա.Հայրապետյան/*

**Որոշվեց՝**

Հաստատել ՀՀ ՎՊԽ 2002 թվականի հուլիսի 26-ի թիվ 110-Ն, 2002 թվականի սեպտեմբերի 27-ի թիվ 232-Ն, 233-Ն, 234-Ն, 235-Ն, 236-Ն, 237-Ն 238-Ն, 239-Ն, 240-Ն, 241-Ն, 242-Ն որոշումներում առաջարկվող փոփոխություններն ու լրացումները:

*/Նորմատիվ/*

**3. «Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի 2009 թվականի նոյեմբերի 9-ի թիվ 37-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին»** հարցը:

*/Զեկուցող՝ Ա.Հայրապետյան/*

**Որոշվեց՝**

Հաստատել «Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի 09.11.2009 թվականի «Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության աշխատակազմ պետական կառավարչական հիմնարկին հանձնվող գույքի կազմը և չափը հաստատելու մասին» թիվ 37-Ա որոշմամբ հաստատված թիվ 1 հավելվածի 2-րդ տողի «481701.86» թիվը փոխարինել «463263.36» թվով, 3-րդ տողի «91230.0» թիվը փոխարինել «114610.0» թվով, 4-րդ տողի «82951.2» թիվը փոխարինել «82903.2» թվով, ընդամենը տողի «673773.5» թիվը փոխարինել «678667.0» թվով:

*/Անհատական/*

**4. «Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության մարդահամարի գործառնական ստորաբաժանման լուծարման մասին»** հարցը:

*/Զեկուցող՝ Ա.Հայրապետյան/*

**Որոշվեց՝**

2011 թվականի մարդահամարի աշխատանքների ավարտի կապակցությամբ Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության մարդահամարի գործառնական ստորաբաժանումը համարել լուծարված 2014 թվականի հունվարի 1-ից:

*/Նորմատիվ/*

**5. Հաղորդում արտասահմանյան գործուղումների հաշվետվությունների մասին.**

**5.1. Հաղորդում՝ Բելգիայի Բրյուսել քաղաքում 2013 թվականի հոկտեմբերի 8-ին հնոգեյթ ծրագրի տեխնիկական քարտուղարության կողմից կազմակերպված «հնոգեյթ ծրագրի էներգետիկ վիճակագրության ցանցի վերաբերյալ» հանդիպմանը մասնակցելու մասին:**

*/Զեկուցող՝ Հ. Հակոբյան/*

**5.2. Հաղորդում՝ Ղազախստանի Ալմաթի քաղաքում 2013 թվականի հոկտեմբերի 31-ից նոյեմբերի 1-ը ՄԱԿ-ի Եվրոպայի տնտեսական հանձնաժողովի կողմից կազմակերպված «Դեպի միգրացիայի և զարգացման տվյալների կատարելագործումը Արևելյան Եվրոպայում և Կենտրոնական Ասիայում» թեմայով աշխատանքային հանդիպմանը մասնակցելու վերաբերյալ:**

*/Զեկուցող՝ Զ. Ավոյան/*

**5.3. Հաղորդում՝ Ֆրանսիայի Փարիզ քաղաքում 2013 թվականի նոյեմբերի 4-ից 5-ը Համաշխարհային Բանկի (ՀԲ) կողմից կազմակերպված «Սոցիալական պաշտ-Պանության ընդգրկվածության և ներգործության վերաբերյալ կատարելագործված տվյալների ապահովում. Տնային տնտեսությունների հետազոտությունների տվյալների դերը» թեմայով աշխատանքային հանդիպմանը մասնակցելու վերաբերյալ:**

*/Զեկուցող Դ. Մարտիրոսովա/*

**5.4. Հաղորդում՝ Բուլղարիայի Սոֆիա քաղաքում 2013 թվականի նոյեմբերի 5-7-ը «հնոգեյթ ծրագրի շրջանակում կազմակերպված Բուլղարիայի էներգետիկայի վիճակագրության փորձին և վառելիքաէներգետիկ հաշվեկշիռներին նվիրված ուսումնական այցելության» վերաբերյալ:**

*/Զեկուցողներ՝ Ա. Անանյան, Հ. Հակոբյան/*

**5.5. Հաղորդում՝ Նիդեռլանդների Հաագա քաղաքում 2013 թվականի նոյեմբերի 11-15-ը Միգրացիայի միջազգային կազմակերպության (ՄՄԿ) կողմից «Միգրացիայի կառավարման ոլորտի օրենսդրության ԵՄ ընդհանուր օրենսդրությանը հնարավոր մոտարկման նպատակով իրազեկվածության բարձրացում» ծրագրի շրջանակում միգրացիոն տվյալների կառավարման ոլորտում փորձի փոխանակման ուսուցողական ծրագրին մասնակցելու վերաբերյալ:**

*/Զեկուցողներ՝ Գ. Գևորգյան, Լ. Քալանթարյան/*

5.6. Հաղորդում՝ Ռուսաստանի Դաշնության Մոսկվա քաղաքում 2013 թվականի նոյեմբերի 14-15-ը ԱՊՀ Միջպետական վիճակագրական կոմիտեի «ԱՊՀ երկրների երիտասարդությունը» վիճակագրական ժողովածուի քննարկման և կառուցվածքի համաձայնեցման նպատակով կազմակերպված ԱՊՀ երկրների ազգային վիճակագրական ծառայությունների մասնագետների համար աշխատանքային խորհրդակցությանը մասնակցելու վերաբերյալ:

*/Զեկուցողներ՝ Հ. Եղիազարյան, Զ. Ավոյան/*

5.7. Հաղորդում ԱՄՆ Վաշինգտոն քաղաքում 2013 թվականի նոյեմբերի 18-22-ը ԱՄՆ Հաշվառումների բյուրոյի կողմից կազմակերպված վիճակագրական տեղեկատվության տարածմանը նվիրված հանդիպումներին մասնակցելու վերաբերյալ:

*/Զեկուցողներ՝ Ս. Մնացականյան, Ա. Սաֆյան, Վ. Գևորգյան, Է. Սանամյան/*

5.8. Հաղորդում՝ Թուրքիայի Ստամբուլ քաղաքում 2013 թվականի նոյեմբերի 20-22-ը ՄԱԿ-ի Եվրոպական տնտեսական հանձնաժողովի (ՄԱԿ ԵՏՀ), Ազատ առևտրի եվրոպական ասոցիացիայի (ԱԱԵԱ), Եվրոստատի, Արժույթի միջազգային հիմնադրամի (ԱՄՀ) կողմից համատեղ, և Թուրքստատի հետ համագործակցությամբ կազմակերպված «Ազգային հաշիվների համակարգ 2008-ի և Պետական ֆինանսների վիճակագրություն 2012-ի ներդրում և դրանց միջև կապերը» խորագրով դասընթացին մասնակցելու վերաբերյալ:

*/Զեկուցող՝ Լ. Խաչատրյան/*

5.9. Հաղորդում՝ Վրաստանի Թբիլիսի քաղաքում 2013 թվականի դեկտեմբերի 4-5-ը Եվրոպական բնապահպանական գործակալության կողմից կազմակերպված Արևելյան տարածաշրջանի ջրի որակի հաշվետվողականության հարցերով տարածաշրջանային ուսումնական սեմինարին մասնակցելու վերաբերյալ:

*/Զեկուցող՝ Ն. Բաղդասարյան/*

5.10. Հաղորդում՝ Ռուսաստանի Դաշնության Մոսկվա քաղաքում 2012 թվականի Դեկտեմբերի 4-6-ը Հայաստանի Հանրապետության՝ Մաքսային միությանը և Բելառուսի Հանրապետության, Ղազախստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության Միասնական տնտեսական տարածքին միանալու միջոցառումների պլանի նախագծի (ճանապարհային քարտեզի) քննարկման և համաձայնեցման նպատակով աշխատանքային խմբի համատեղ նիստին մասնակցելու վերաբերյալ:

*/Զեկուցող՝ Բ. Պողոսյան/*



**5.11. Հաղորդում՝ Շվեյցարիայի Ժնև քաղաքում 2013 թվականի դեկտեմբերի 2-4-ը ՄԱԿ-ի Եվրոպայի տնտեսական հանձնաժողովի «Աղքատության չափման հեռանկարները» խորագրով աշխատանքային հանդիպմանը մասնակցելու վերաբերյալ:**

*/Զեկուցողներ Գ.Գևորգյան, Լ.Պեպրոսյան/*

**5.12. Հաղորդում՝ Ավստրիայի Վիեննա քաղաքում 2013 թվականի դեկտեմբերի 16-17-ը ՄԱԿ-ի Արդյունաբերական զարգացման կազմակերպության (UNIDO) կողմից կազմակերպված «ԱՊՀ երկրներում արդյունաբերական վիճակագրության կատարելագործում և արդյունաբերական քաղաքականության վերլուծության համար վիճակագրական ցուցանիշների մշակում» խորագրով սեմինարին մասնակցելու վերաբերյալ:**

*/Զեկուցողներ Ս. Մնացականյան, Գ. Անանյան/*

**Որոշվեց՝**

**Արտասահմանյան գործուղումների հաշվետվությունների մասին հաղորդումներն ընդունել ի գիտություն:**

*/Անհատական/*

**6.«Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի 2013 թվականի նոյեմբերի 13-ի թիվ 33-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» հարցը:**

*/Զեկուցող՝ Վ.Սարոյան/*

**Որոշվեց՝**

**Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի 2013 թվականի նոյեմբերի 13-ի «Առևտրային կազմակերպություններում աշխատողների թվաքանակի և աշխատավարձի մասին» հետազոտության հարցաթերթը և լրացման հրահանգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի 2003 թվականի դեկտեմբերի 14-ի թիվ 40-ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին թիվ 33-ն որոշման վերնագրում «2003» թիվը փոխարինել «2009» թվով:**

*/Նորմատիվ/*